Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵՃ-3 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան - ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 15.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.-30.06.2024թթ. |
| Ներկայացման օր | 08.07.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.07.08
15:32:33 AMST

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 100 շահառու:
  Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է վերափաստագրման, ապա եռամսյակային հրատապ օգնության համար դիմումի գործընթացի կազմակերպում ԸՆ համակարգում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 15 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 15 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել, իսկ 18 շահառու ներգրավվել են հոգեբանական խմբային հանդիպումներին,
  - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 22 շահառու մասնակցել է կենտրոնում գործող խմբակներին՝
    - ✓ Կինեզոլոգիա,
    - ✓ Հմուտ ձեռքեր,
    - ✓ Երգ,
    - ✓ Պար
    - ✓ Տիկնիկագործություն,
    - ✓ Ձեռքի աշխատանք,
    - ✓ Քննարկումների ակումբ,
    - ✓ Առողջապահական:
    - ✓ Գրական
  - Ճաշարանի 49 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝
    - Նվիրված «Սուրբ Հարության» տոնին -2
    - Էքսկուրսիա՝ Կենդանաբանական այգի,
    - Մայիսյան տոներ,
    - Ծննդյան օրերի նշում-2
    - «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Պենդերեցկու անվան ժամանակակից երաժշտության փառատոն:
    - «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Պենդերեցկու անվան ժամանակակից երաժշտության փառատոն:
    - Ա.Բաբաջանյան համերգասրահ, Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախումբ:
    - Ա.Բաբաջանյան համերգասրահ, Մտավորականը՝ Վլադիլեն Բալյան:
    - «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, համերգ՝ նվիրված Պետրոս Հայկազյանի 100-ամյակին:
    - «Արամ Խաչատրյան» համերգասրահ, Կանդինսկու անվան սիմֆոնիկ նվագախմբի համերգ:
    - Ա.Բաբաջանյան համերգասրահ, Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ, համերգ նվիրված Վլադիլեն Բալյանի 100-ամյակին:
    - Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն, …Ով երգում է հայերեն… նվիրված Թովմաս Պողոսյանի 70-ամյակին:

- Թումանյանի անվան այգի, Երեվան բալետ ֆեստ, Սանկտ Պետերբուրգի Բորիս Էյֆմանի ակադեմիական բալետի ներկայացումը:
- Թումանյանի անվան այգի, Երեվան բալետ ֆեստ, Ա.Սպենդիարյանի անվան ազգային թատրոն, «Կարապի լիճը» բալետը:
- Թումանյանի անվան այգի, Երեվան բալետ ֆեստ, Թբլիսիի ազգային բալետի ներկայացումը:
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Ա.Խաչատրյանի անվան 20-րդ միջազգային հոբելյանական մրցույթի բացման համերգը:
- Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության մշակույթի կենտրոնի Ջիվանու անվան աշուղական դպրոցի Սարգիս Խաչատրյանի դասարանի սաները ներկայացնում են «Հայրենիքիս ջուրը» խորագրով համերգ – երեկո:
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, «Օպերայի ուրվականը» համերգը:

  - 13 շահառու (շարունակական) օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Նվիրված Սուրբ Հարության տոնին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100081543423963/videos/456054626768871/ ),

- էքսկուրսիա՝ Կենդանաբանական այգի, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/photo/?fbid=861093019387868&set=pcb.861093286054508),

- Միջոցառում նվիրված տարեդարձի օրվան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid027FXD1zcSPVCFesGWzKC3w62CkdpFi29ftQAodKMGznBnU46DVQuciF2tssdNK79Pl&id=100081543423963),

- Նվիրված մայիսյան տոներին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/1613758709409511?locale=hy_AM ),

- էքսկուրսիա՝ Պ.Սեվակի տուն-թանգարան, Նորավանք, (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100064615335914/videos/1110852203314206?locale=hy_AM ),

- կինեզիոլոգիա (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/100064615335914/videos/382463164335471),

- Հմուտ ձեռքեր (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/photo?fbid=832386858925151&set=pcb.832387102258460&locale=hy_AM),

- Երգ (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/100064615335914/videos/236037106236228),

- Պար (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/100064615335914/videos/281342785038455),

- Տիկնիկագործություն, (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/photo/?fbid=874224171408086&set=pb.100064615335914.-2207520000),

- Գրական (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/photo/?fbid=853916143438889&set=pcb.853916253438878),

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար.

- Շենգավիթի ցերեկային կենտրոնի սոցիալական աշխատողները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից կազմակերպած դասընթացին՝ «Սոցիալական դեպքի վարման մեթոդաբանություն» թեմայով:
- Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա թիմերի պատասխանատու սոցիալական աշխատողը մասնակցել է տարեցների պաշտպանության ցանցի անդամ կառույցների ներկայացուցիչների՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից նախաձեռնած մեկօրյա վերապատրաստմանը, փորձի փոխանակմանը: Վերապատրաստումն անցկացրել է փորձագետ, որը տիրապետում է մի շարք երկրներում տարեցների խնամքի և աջակցման կենտրոնների հիմնադրման և գործարկման աջակցման փորձին:

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 100/100 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 60 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 31 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 16 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 6 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 25 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 69 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | - |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 100 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Ժամանցային ծառայություններ<br>Բաղնիքի ծառայությունից | 49<br>13 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «08» 07.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)